ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«27» օգոստոսի 2018 թվականի N 108-Հ

2018/2019 ԹԹ. ԱՇՈՒՆ-ՁՄԵՌ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ ԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2018/2019թթ. աշուն-ձմեռ ժամանակաշրջանում էլեկտրատեղակայանքների, անավարտ և ժամանակավոր կառույցների, էներգետիկայի բնագավառի կարևորագույն այլ օբյեկտների անխափան աշխատանքն ու շահագործումն ապահովելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Ստեղծել կենտրոնական հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գ. Բաղրամյան	Նախարարի տեղակալ (նախագահ),
Լ. Շահվերդյան	Նախարարի խորհրդական (նախագահի տեղակալ),
Հ. Բաղալյան	Էներգետիկայի վարչության պետ
Ա.Գրիգորյան	Էներգետիկայի պետական տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,
Մ. Մնացականյան	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» (ԷԷՀՕ) ՓԲԸ գլխավոր տնօրեն,

Գ. Բայան	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» (ԷԷՀՕ) ՓԲԸ գլխավոր ճարտարագետ,
Մ. Ջալալյան	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ գլխավոր տնօրեն,
Ա.Գրիգորյան	«Հայկական ատոմային էլեկտրակայան» (ՀԱԷԿ) ՓԲԸ գլխավոր ճարտարագետ,
Ա. Գևորգյան	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ տեխնիկական տնօրեն,
Լ. Ադամյան	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» («ԲԷՑ») ՓԲԸ տեխնիկական տնօրեն,
Կ.Սարգսյան	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Հրազդան-5 հիմնարկի տնօրեն (համաձայնությամբ),
Ա.Մնացականյան	«Հրազ ՋԷԿ» ԲԲԸ գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),
Դ.Գրիգորյան	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») ՓԲԸ տեխնիկական տնօրեն (համաձայնությամբ)
Հ.Սարգսյան	«Միջազգային էներգետիկ կոորպորացիա» («ՄԷԿ») ՓԲԸ գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),
Ա. Յոլյան	Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ արտադրության ղեկավար (համաձայնությամբ),

2. Կենտրոնական հանձնաժողովի նախագահին՝ 2018/2019թթ. աշուն-ձմեռ ժամանակաշրջանին անցման համար նախապատրաստական աշխատանքների կազմակերպումն ու կատարումն ապահովելու նպատակով առաջարկել «Երևան ՋԷԿ», «ԲԷՑ», «ՀԱԷԿ», «ՀԷՑ», «ՄԷԿ», «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ների, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Հրազդան-5» հիմնարկի և «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի տնօրեններին՝

1) մինչև 2018թ. օգոստոսի 30-ը ընկերություններում ստեղծել հանձնաժողովներ՝ գլխավոր ճարտարագետների կամ շահագործման գծով փոխտնօրենների նախագահությամբ,

2) մինչև սեպտեմբերի 5-ը մշակել և հաստատել 2018/2019թթ. աշուն-ձմեռ ժամանակաշրջանին անցման համար նախապատրաստական աշխատանքների կազմակերպման ու կատարման միջոցառումների պլան-ժամանակացույց և ներկայացնել կենտրոնական հանձնաժողովին: Ապահովել միջոցառումների ժամանակին կատարումը,

3) նախապատրաստել սարքավորումները, մեխանիզմները, նյութերը և այլ անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները՝ 2018/2019թթ. աշուն-ձմեռ ժամանակաշրջանում անվտանգ և հուսալի շահագործմանը,

4) վթարային վերականգնողական աշխատանքներ կատարելու համար նախապատրաստել անհրաժեշտ քանակությամբ մեխանիզմներ, ավտոտրանսպորտ և բրիգադներ,

5) մշակել ընկերության աշխատանքային ռեժիմները և համաձայնեցնել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի հետ,

6) 2018/2019թթ. աշուն-ձմեռ ժամանակաշրջանին անցման համար նախապատրաստական յուրաքանչյուր ամսվա աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկացնել կենտրոնական հանձնաժողովին մինչև հաջորդող ամսվա 5-ը, իսկ վերջնական արդյունքի հաշվետվությունը ներկայացնել՝ մինչև նոյեմբերի 15-ը,

3. «ԷԷՀՕ» ՓԲԸ-ին՝ 2018/2019թթ. աշուն-ձմեռ ժամանակաշրջանում համակարգի ռեժիմներն իրականացնելիս, խստորեն ղեկավարվել աշխատանքները կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերով:

4. Կենտրոնական հանձնաժողովի նախագահին՝ համակարգել ընկերությունների հանձնաժողովների աշխատանքները և կատարված միջոցառումների մասին պարբերաբար զեկուցել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ